

պանելու, յառաջացնելու մարդկութեան դատը, իր ընկերային, տնտեսական, առողջապահական պայմաններով, և այդ կ'ըլլայ ազգու, իրական մշակութային նոր վերագործումով, դաստիարակութեան լայն խմբատով:

Վախ չկայ որ միջազգային դաստիարակութեան համագործակցութեան իտէալը անհամաձայն ըլլայ ազգայնութեան իտէալին հետ: Միջազգային դաստիարակութիւն չի նշանակեր շնչել ազգային զգացումները երբ զօրանայ գաղափարը թէ՛ իւրաքանչիւր ազգ ընդհանուր յառաջդիմութեան մէջ իր դերը ունի խաղալիք և որ կրնայ արդարացի հպարտութիւն մը տալ իւրաքանչիւրին պարզեաձ ծառայութեան համար: Խտէալ, միջազգային մտայնութիւն, զարգացնելու համար թափուած ճիգերը արգելք չեն ազգային հոգեբանութիւնները ճանչնալու և զարգացնելու, ինչպէս ազգային դաստիարակութեան մէջ կարելի չէ անգիտանալ անհատներու հոգեբանութիւնը: Ազգային մշակութային անկախութիւնը անհամաձայն չէ միջազգային մտաւորական համագործակցութեան հետ: Ինչպէս ազգի մը ծոցին մէջ հասարակական մշակոյթ մը կը զարգանայ մշակութային գործունէութեան զանազանութեամբ, այսպէս ալ համաշխարհային մշակոյթը կարելի է զարգացնել ազգային մշակոյթներու պէսպիսութեամբ, պայմանաւ որ նոյն նպատակին ձգտին, այսինքն մարդկութեան արժէքներուն հարստացումին:

Ազգ մը որ իսկապէս ռամկավարական է, անձնական արժէքները գնահատող, քաղաքացիներուն պաշտպանող, ընդգէմ անիրաւ ցանկութեանց, կուսակցական վրէժխնդրութեանց, ոստիկանական բռնակալութեանց, օրէնքի տիրապետութեամբ, հոն հանրային բարոյական պատասխանատուութիւնը կ'ուռճանայ: Ազգ մը որ իսկապէս ազատ է, ազգ մը չէ որ կը նկատէ իր հաստատութիւնները իբր կատարեալ, անթերի, պարտադրելու համար համաշխարհային դաստիարակութեան: Ազատութիւնը ինքնաքննութեան շարունակական process մըն է, ինչպէս նաեւ միւս ազգերուն կեանքին քննադատական ուսումնասիրութեան ուղին: Լուծումը՝ հարազատ միջազգային համագործակցական ձեռնարկ մը որ քով քովի պիտի բերէ բոլոր ազգերու մտաւորական առաջնորդները, ոչ թէ ապահովելու համար աշխարհի վրայ դաստիարակութեան մէկ և միօրինակ դրութիւն:

մը, որովհետեւ այդ մահացու պիտի ըլլար՝ գիտութեանց և դպրութեանց վրայ վարագուրելով ամէն նախաձեռնարկ և զանազան մշակոյթներու վայելում, այլ՝ հաւասար գետնի վրայ, պատրաստակամութիւն ամէնուն կողմէ, օգտուելու իւրաքանչիւրին փորձառութեան և յետոյ՝ իւրաքանչիւրը կը հետեւի իր անձնական ուղիին՝ աւելի լաւ ճանչնալու համար միւս ազգերուն մտաւորական գոհացումները, մշակելու համար աւելի սերտ միութիւն ու հասկացողութիւն ազգերու միջեւ և պահպանելու համար աշխարհի խաղաղութիւնը: Այսպիսի համագործակցութեամբ մոլեռանդ ազգայնամոլութիւնը պիտի չկարենայ վերապրիլ և միանգամայն ժողովուրդներուն ինքնատիպ ու հարողաւ հանճարները, որոնք կը տառապին բռնակալութեանց ներքեւ, պիտի սատարեն մտաւորական ընդդիմադրութեան կապանքներէն ազատելու և ալ աւելի յառաջդիմելու պատեհութիւն ընծայելով: Միջազգային կազմակերպութիւնն է որ կը համախմբէ մտածումի առաջնորդները բաղդատելու համար իրենց փորձառութիւնները և ուսումնասիրելու համար համաշխարհային համագործակցութեան կարելիութիւնները:

Միջազգային հասկացողութիւն, միջազգային մտաւորական համագործակցութիւն դրսէն պարտադրուելիք բաներ չեն: Կարելի չէ զայն իրականացնել մոգական բանաձեւերով, սահմանադրական գծերով, ոչ ալ վարչական մեքենայով: Կ'իրագործուի միայն դաստիարակութեամբ, զարգացումով, մեր ամէն մէկուն մէջ ընդունելով մարդկային արժէքներուն արժանապատուութիւնը և մշակութային ու մտաւորական գործունէութեանց համաշխարհային համերաշխութեան ճանաչումը:

Միջազգային Աշխատաւորական կազմակերպութեան մէկ յօդուածը կ'ըսէ. - « Ընկերային արդարութիւնը ճանչցուած է ընդհանուր խաղաղութեան իբր մէկ պայմանը»: Եթէ այդպէս է, ալ աւելի կարեւոր է զանգուածներու դաստիարակութիւնը, պէտք է պայքարիլ մարդկութեան ամենամեծ աղէտին՝ տգիտութեան դէմ, մամուլով, գիրքերով, ձայնասփիւռով, շարժապատկերով, իրագործելով աւելի արդար բաշխում մշակոյթի զանազան աղբիւրներու: Այնքան ատեն որ աշխարհին կէսէն աւելին, ըստ վիճա-

կազմութեանց, կը մնայ անուս, անգրագէտ, մշակութային զանձերուն անձանթ, ճշմարիտ և տեւական խաղաղութիւն կարելի չէ հաստատել, ընծայելու համար ապահովութիւն բոլոր ազգերու և վայելուչ կեանք բոլորին համար: Պայքար պահպանողական միջավայրերու սնամիտ միջակութեան դէմ, նեղմիտ ու սահմանափակ ազգայնամոլներու հալածական dogmatism-ի դէմ, մեքենայացած « յօսք » ներքու յիմարութեանց դէմ: Իմաստութիւնը պտուղն է հաւասարակշռուած զարգացումի. անհատականութեան այս հաւասարակշռուած զարգացումն է որ ըլլալու է հարազատ դաստիարակութեան նպատակակէտը:

Քաղաքակրթութիւն և մշակոյթ մարդկային ցեղին հատարական աշխատութեանց և նուաճումներուն արդիւնքը կը ներկայացնէ որուն բոլոր ազգերը ամէն ժամանակներու, սատարած են առաւել կամ նուազ: Սակայն մեծ անդունդ մը կայ զաղափարներ կաղապարողներուն և զանգուածներուն միջեւ: Զանգուածները կը վայելեն այն քաղաքակրթութեան բարեքները, բայց ո՛ր և է գնահատանք ու յարգանք չունին ստեղծագործ մտաւորականներուն հանդէպ: Անոնք կը տեսնեն միայն նիւթական կողմը, առանց նշմարելու բարոյական ու մտային արժէքները: Ամբողջ քաղաքակրթութիւնը անոնց համար հոմանիշ է գիտութեան և թէքնիքի, որուն զլիաւոր արդիւնքները կը վայելեն նիւթական ու տնտեսական կեանքին մէջ: Կեանքին նշառակութիւնն է գիտելը՝ որ կը դիւրացնեն ամէն ինչ իրենց օգտին համար առանց ճանչնալու անոնց յարաբերութիւնները աւանդական յատանոնքներու հետ: Զանկութիւններուն և արժէքներուն հետ: Զանգուածները կը փրկիսփայեն, կը տրամաբանեն նոր քաղաքակրթութեան աւելի մակերեսային պաշտական մեկնաբանութիւն և տնտեսական որոշադրականութիւն քարոզող մտաւորականներուն և կամ հրաժարելով բանականութենէ կեանքին ստորերկրեայ վեհաշուք աստուածներու գիտելու նուիրական աղբիւրն է, ըստ իրենց: Կեանքին նուիրական աղբիւրն է, ըստ իրենց: Արդի աշխարհը կը ձեւաւորուի գիտութեան և արուեստի նուաճումներով. ձգտում մը կայ գերազասելու այս ծանօթութիւնները ի քննադատ միւս գիտելիքներուն: Արուեստի մասնա-

գէտներ կը բազմանան օր ըստ օրէ, իսկ մշակաւ միտքեր կը նուազին: Կը պատրաստեն մարդիկ նիւթապէս լաւ ապրելու համար միայն. այս մասնագիտութիւններով ոչ մին կարող է կերտել իսկական դաստիարակութիւն: Թերեւս կ'ազատագրեն նախապաշարութիւնէ, բայց նաեւ կը շնչեն մարդուն մէջ հոգեկան արժէքներուն աւանդութիւնը, առանց տեղը բան մը բերելու: Մարդ էակին կը պարգեւեն զօրութեան պատանքը, բայց չեն սահմաներ հոգեկան ու մշակութային պէտքերը որոնց ի սպաս դրուելու էր այդ ոյժը: Դաստիարակութիւնը պէտք է իր սիրտին համար, վերլուծելու, քննելու, բաղդատելու, հասկնալու, գիտնալու հաճոյքին համար:

Մտաւորականները ինքզինքնին նուիրած են զաղափարներու յառաջդիմութեան, մինչ զանգուածները կը հետաքրքրուին յառաջդիմութեան զաղափարներով: Բարձր դաստիարակութեամբ օժտուած հատուածներ, մարդկային ցեղին աւանանուրը միտքերը այնքան ցիրուցան են, այնքան հեռացած են հասարակ մարդէն որ անկարող են քաղաքական ու ընկերային ամենալատար դժբախտութեանց դիմաց: Մտաւորականները չեն կրնար բարձրանալ, մենակեաց, փղոսկրեայ աշտարակներու մէջ, կեանքին հոսանքէն դուրս ստեղծելով միայն իրենց ինքնապաշտպանութիւնը և զայն նկատելով լոկ անձնական հաճոյքի աղբիւր: Վսեմ պարտականութիւնը ունին իմաստ մը տալու կեանքին, նութինը ունին իմաստ մը տալու կեանքին, ապա թէ ոչ՝ իրաւունք չունին յանդիմանելու զանգուածները աշխարհի կացութեան համար, զանգուածները աշխարհի կացութեան համար, ոչ ալ ո՛ր և է արդարացում՝ բողոքելու անոնց ըմբոստութեան դէմ կամ զանազան արկածախնդիրներու առաջնորդութեան իրենց հլու հնազանդութեան դէմ:

« Բոլոր մտաւորականները, կ'ըսէր Պլատոն, իրենց դերը ունին խաղալիք մարդկութեան առօրեայ դրական գործերուն մէջ, կաղապարաւ հանրային կարծիք մը »: Ապա թէ ինչու համար հանրային կարծիքը դանդաղօրէն պիտի ոչ՝ քաղաքակրթութիւնը դանդաղօրէն պիտի կանխորոշէ հետ. օր մը աշխարհ պիտի գտնուի անբեւութանայ իրեն նեցուկ եղող մտաւորականներուն հետ. օր մը աշխարհ պիտի գտնուի անհաւոր վտանգներու առջեւ ոչ թէ գիտութեամբ, առաջին հերթին հակակշիռ: Գիտութիւնը իր իշխանութեան տակ պիտի առնէ մարդկային գոյութիւնը և մարդկային ցեղը անձնասպան պիտի ըլլայ խորտակելով երկրագունդը:

Չէի մեծ առաջնորդ մը, Գոմէնիւս, 1643-ին կը գրէր հետեւեալ տողերը որոնք կարծես այսօր գրուած ըլլային. — « Անմիջական պատասխան մը պէտք է դարուս խելագարութեան դէմ որմէ խաթարուած են բազմաթիւ անձեր և որ կ'առաջնորդէ զիրենք անողորմելի վախճանի: Ամբողջ աշխարհի մէջ ականատես կ'ըլլանք աղետալի անհամաձայնութիւններու, քայքայող բոցերով պատերազմներու որ կը փնտցեն պետութիւններ և ժողովուրդներ, այն աստիճան որ կարծես բոլորը դաւադրած ըլլային իրենց փոխադարձ աւերը արագացնելու որ պիտի վերջանայ իրենց և տիեզերքին բնաջնջումով: Աշխարհի կայուն ճշմարտութեան համար անհրաժեշտ է միտքերու վերադարձը իրարմէ: Խաղաղութիւն և համաշխարհային ներդաշնակութիւն ապահովելու ենք մարդկութեան համար: Ըսել կ'ուզեմ ո՛չ թէ ազգերու միջեւ արտաքին խաղաղութիւն միայն, այլ միտքերու ներքին խաղաղութիւն, ներշնչւած գաղափարներու և զգացումներու դրութենէ մը: Եթէ այս նպատակին հասնինք, մարդկային ցեղը տէր պիտի ըլլայ մեծ խոստումի... »:

Իր տկարութեան մէջ Իւնէսթօն կը ֆայտ տակաւին աշխարհի խղճմտանքը: Պէտք չէ զայն դատաւարաբար հակառակ անբաւարարութեան և անկատարութեան, այլ շահագրգռուելու է սըրտանց: Կապ մըն է ազգերու միջեւ, պատուար մըն է ամբողջական անիշխանականութեան դէմ և յարաբերական երաշխաւորութիւն մը ոյժի թագաւորութեան դէմ: Պէտք է այդ կապը զօրացնել, պատուարը ամրացնել և գործնական դարձնել երաշխաւորութիւնը: Անով համաշխարհային գաղափարն է որ կ'արտայայտուի. հաւատքը ունենանք ըսելու թէ Իւնէսթօն, զերծ քաղաքական հանգամանքէ, մեզի կը թուի աշխարհի խորհրդանիշը:

Անքառու առաւելութիւն մը ունի ՄԱԿի վրայ, այն է թէ մեծ պետութիւններուն տիրապետութեան տակ չէ, այլ բոլորը հաւասար իրաւունքներով: Միայն թէ հսկելու է որ մշակութային ազգայնականութիւնը չտիրապետէ, կազմակերպութեան ոգին չխեղդէ մշակութիւնը կլանելով անհատականութիւնը որ մեծ դեր կը կատարէ մտքի քաղաքակրթութեան մէջ: Մշակութիւնը անհրաժեշտ պայման է կապուիլ նախ մարդկային թանձրացեալ պէտքերուն: Միջազգային վեհա-

ոչ ալ անհատը՝ վարչութեան առջեւ, ձերբազատելով ազգայնական խնամակալութենէ: Երկու արժէքներ, անհատը և հատկապէս իրենը, որոնցմէ մարդկութիւնը չի կրնար հրաժարիլ: Մտաւորական ընտանիք մը, անհատի դրօշակով:

Ուրան ալ այժմ բարոյական է իր ազդեցութիւնը, դարձեալ մեծ ոյժ մըն է: Սակայն խաղաղութիւնը միջազգային հասկացողութիւն մը չէ՝ միայն. բնական պէտքերու և ինքնապահպանման բնագոյն քաղաքականութեան սկզբնական կորիզը ըլլալու է ինչպէս ընկերականութեան բնագոյնը իրաւունքներու ստեղծագործիչ կորիզն է: Անոնք որ կը վայելեն ազատութեան երկնաւարագէ բարեքնքը, դժուարաւ կը հասկընան գաղափարապաշտութեան մը հրապոյրը որ գործնականին մէջ կը մերժէ անհատին իր անձնական ճակատագիրը վարելու իրաւունքը: Բայց անոնց համար որ չունին այս անգուգական բախտը, ազատութիւնը կը թուի աննշան բան մը երբ թշուառութիւն կը տիրէ: Ասոնց մօտ, ամենադժգին ոսկեգարու մը խոստումն է որ արձագանգ կը գտնէ. որովհետեւ ամէն վերիվայրումներուն մէջ կը տեսնեն բարոյութիւնը յոյսը: Վտանգաւոր պատրանք մըն է կարծել թէ կարելի է բարձրացնել գանգուածներուն նիւթական ու հոգեկան կեանքին մակարդակը, առանց փոփոխութեան ենթարկելու անտեսական ու ընկերային կառուցումները որ կը թոյլատրէ փոքրամասնութեան մը միայն վայելել մարդկութեան եկամուտներուն մեծագոյն մասը:

Ի հարկէ ազատութիւնը անգնահատելի գանձ մըն է, բայց երբեք մոռնալու չենք որ չենք կրնար լիովին վայելել զայն առանց նուազագոյն տպահովութեան և նիւթական դիւրակեցութեան: Թշուառութեան առջեւ ազատութիւնը անպէտ ու անհամ սնունդ մը կը դառնայ:

Գիտակից այս տարրական ճշմարտութեան, Իւնէսթօն ընդհանուր տնօրէն Թօրէս Պօտէ Յուսիս ամսոյ Ֆլօրանսի Տրք նիստին մէջ կը բացազանչէր. — « Իւնէսթօն երազողներու ժողով պէտք չէ ըլլայ, իր գործունէութիւնը պէտք չէ պարփակուի վերացականին մէջ, իր կոչումն է գործնականը: Աշխոյժ համագործակցութեամբ պէտք է զօրացնել մարդկութեան բարոյական ու մտաւորական սերտ համերաշխութեան գաղափարը և խաղաղութեան ծառայելու համար անհրաժեշտ պայման է կապուիլ նախ մարդկային թանձրացեալ պէտքերուն: Միջազգային վեհա-

Ժողով մը անխուսափելի է ծրագրելու համար մարդկային իրաւանց համաշխարհային դաշնագրութիւն մը... »:

Իցի՛ն թէ Իւնէսթօն կարողանար իրականացնել ուղեկորոյս մարդկութեան փրկութեան համար իր սրբազան առաքելութիւնը:

Ա. ՍԱԼՄԱՍԼԵԱՆ

Փարիզ, 1 հոկտ. 1950.

Լ Ո Յ Ս Ի Ն

Ես կ'ըզգիս արեւծաղիի մը նման, Միշտ արեւին ուղղել սիրտըս դէպքաւ, Ու չըտեսնել շուրջ կեանքիս պատմութեան, Ընդդէմ լոյսին, ամբիշտ լոյսին սիրտիս, Ընդդէմ շողերն արշաւորչին հրահրան, Ժպտիլ անոյժ վերջադրոյսին ողբիս:

Եւ երբ գիշերն բաւայ իր սիրտը մըրին, Ես կ'ըզգիս քիթեմիկի մը նման, Փարիզ դողող ձրազներուն տարփագին, Այրիք բոցով, մեռելի լոյսէն անբաժան, Անիւն դառնալ չերս համբոյրով կրակին. Ա՛ն, կ'ըզգիս լոյսն ունենալ ինձ դարբան:

20 Մարտ 1950

Գ Ի Շ Ե Բ Մ Յ Ի Ն

Արտիս վրդայ այրող վերքերն, Ես կը պահեմ գերդ գաղտնիք, Որ ուրիշի սրտին վրայ, Չըցայտէ կայծ մը փոքրիկ:

Ծովը երբ խոր վիշտ մ'ունենայ, Կը մըրքնէ մոլեգին, Բայց սրտին մէջ ան կը ծածկէ, Բիշր գանձերն իր յանկագին:

Ո՛հ, ես որքան կը նրմանիմ Այն կապտաւոր երկինքին, Որ ուրիշին ցոյց կու տայ միշտ Հեզ ժպտիս իր լուսածին:

Իսկ Գիշերին՝ երբ առեմ սիրտ Կը մըրքնէ հեշտագին, Ան կը լուսայ վերքերն իր խոր Ու կը հեծէ առանձին:

Հ. ԵՓԲԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

21 Մարտ 1950

ԱՐՅՈՒՆՔԵՆՐՈՒՍ ՀԵՏ ԱՆՁՐԵԻ

Լուս ու քախճաղի հոգիս տրտօրեմ, Ծովափը գրեաց այս գիշեր նորեմ...: Սեւ ժայռի գլխին նստած ես տըխուր գիտեցի երկինք ու ջուրերը լուս... Մեր անպերտ մէջ լուսինը արծար, Ոսկի կը սրտիկ ծով սրտին լազմարդ. Ջուրերն այդ անդ կ'ըլլան ձիւն փոփուր, Կ'եղեն օդին մէջ՝ տեսնով գեղանի, Ու ձիւնաւորիկ ու մեծ փոքրիկ... Ու քաւորըրդ սըրքը գիշերը իրան Տեսնով անուշիկ կ'ըլլան միւնէ վար... Մըռնէնքն անդ, քնիւնքներն հոյր, Օղբ պարտքող անձանք ձայներ... Կարծես պատերազմ անդ ձիւնը, Որ քաւորիկ նըժոյգով կու գան, Եւ խաղաղ ափին կողերուն հանդարտ Պիւնդ կը հարուստեն նսեւ իմ սրտին...:

Անքերս խոնաւ սիրով առըցուն, Կշտացած ծովին կը դիտեն հեռուն, Հեռուն շատ հեռուն խորը երկնի, Ծրէն մը անպի, սեւ ու բրգածեւ Որպէս մեկ վեղար, աշխարհ մը անհուն Անհուն... ու բարձր հոգի մը քաշի... Անպիկն այդ խոնարհ, ըմբատ հոգիով, Կը բացուի կ'ոռի կ'ըլլայ շանք ու բոց, Ու լոյս ժապաւեն որ դրդողարեն, Երկինք գոռարով արցունքներուն հետ Անհուն կը սկսի...: Ու անպիկն այդ հեզ, վեղարը քաշի, Սիրտը կործանեց, շանքահարեց գիւ... Ու ալ ես չըմամ... լացիք ու լացիք Երբ կը հաճիր...:

Ն. ՕՏԱՃԵԱՆ

Asburg Park
15 - IX - 1948